Առողջապահության Նախարարություն
Հայաստանի Հանրապետության

"Բաքստեռ» Ընկերություն ՓԲԸ-ից
Ռուսաստանի Դաշնություն, 125171, Մոսկվա, Լենինգրադյան խճուղի,
16Ա շենք, շինություն 1,
Հեռ. +7(495)647-68-07

Ելք. № QA-012
2017 ովկանի մարտի 07

Վերնագիր՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՆՈՒՑՈՒՄ՝ Շտապ ուղղիչ գործողություն բժշկական ապրանքի նկատմամբ
«Prismaflex» բժշկական ապրանք՝ Մեկանգամյա սեթի անջատման սխալներ
Բժշկական ապրանքի անվանումը. Prismaflex 7.XX
Բժշկական ապրանքի ծածկագիրը. 114870
Սերիական համարը.PA17262

Հարգելի պարոնայք,
Բաքստեռ Հելթքեյա Քորպորեյշնը ("Բաքստեռ» Ընկերություն ՓԲԸ-ի միջոցով) տեղեկացնում ուղղիչ գործողության մասին՝ «Prismaflex» բժշկական ապրանքի ծրագրային ապահովման մեկնակերպի նորոգման նպատակներով: "Բաքստեռ» Ընկերությունը ստացել է հաղորդագրություններ այն մասին, որ բժշկական արտադրատեսակի սպառողները չեն պահպանում "Prismaflex" մեկանգամյա սեթերի անվտանգ բեռնաթափման հրահանգի պահանջները: Այդ գործողությունները անհրաժեշտ են հիվանդի անվտանգ անջատման համար սեթի բեռնաթափումից առաջ բուժական ընթացակարգից հետո:
Մեկանգամյա սեթի բեռնաթափումը առանց հրահանգի պահպանման և «Prismaflex»-ում տագնապի ազդանշանի հայտնվելու դեպքում կարող են հանգեցնել արյան մեծ քանակության կորուստի և հնարավոր մահացու վերջին:
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒ՝Մ
Մեկանգամյա սեթի բեռնաթափումը կամ դուրս հանումը միացրած հիվանդի դեպքում հանգեցնում է արյան լուրջ կորուստի: Միշտ անջատեք հիվանդին մեկանգամյա սեթից մինչև «Prismaflex»-ից մեկանգամյա սեթի բեռնաթափումը կամ դուրս հանումը:

Բժշկական ապրանքը մատակարարվել է 01/09/2016-ից 01/11/2016-ը ընկած ժամանակահատվածում:
2012 թվականից Baxter ընկերությունը ստացել է հաղորդագրություններ այս խնդրի հետ կապված վեց լուրջ խախտումների և հիվանդների հինգ մահերի մասին:
Բաքստեռ ընկերությունը կթողարկի ծրագրային ապահովման նորացված մեկնակերպը, որտեղ նախատեսված են հիվանդի անվտանգության լրացուցիչ միջոցները: Լրացուցիչ ավտոմատացված թեստը թույլ կտա ապահովել սպառողի կողմից արյան վերցման և վերադարձման գծերի փակումը: Այն դեպքում, երբ հայտնաբերվի, որ գծերը փակված չեն, ապա բեռնաթափման հաջորդականությունը դադարեցված կլինի և սպառողը կտեղեկացվի վթարային ազդանշանի սարքի միջոցով:
Սպառողների կողմից մինչև ծրագրային ապահովման նորացումը մեկանգամյա սեթի բեռնաթափման կանոնների պահպանման նպատակով, Բաքստեռ ընկերությունը հիշեցնում է բոլոր սպառողներին, որ անհրաժեշտ է հետևել հետևյալ հրահանգներին, ներկայացված շահագործման ձեռնարկում, և ցուցադրված «Prismaflex»-ի էկրանին.

1. Սեղմիչնեչով փակել բոլոր գծերը,
2. Անջատել արյան վերցման և վերադարցման գծերը արյան վերցման սարքից,
3. Համոզվել, որ բոլոր գծերը փակված են սեղմիչների միջոցով, իսկ հիվանդը անջատված է

Մեր տեղեկություններով, Հայաստանի Հանրապետությունուն այս բժշկական ապրանքը ստացել է 1 սպառող: Այս նամակին կցված է լրատվական հաղորդագրություն, որն ուղղված է սպառողին:
Ցանկացած հարցերի առաջանալու դեպքում խնդրում ենք դիմել Նատալյա Ռիբալկոյին, +7 (495) 647-68-07 կամ էլեկտրոնային փոստով. CIS_quality@baxter.com:
Հարգանքներով՝

Նատալյա Ռիբալկո
Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում որակի ապահովման ավագ մենեջեր
"Բաքստեռ» Ընկերություն ՓԲԸ

Հավելում. Լրատվական հաղորդագրություն սպառողին 4 էջում:

Սույն փաստաթուղթը ռուսերենից հայերեն թարգմանել եմ ես՝ թարգմանիչ Գոհար Հարությունի Հարությունյանս:

Общество с ограниченной ответственностью * ОГРН 1047796081866 * МОСКВА
"АДВЕНТ ТРАНСЛЭЙШН"
ADVENT TRANSLATION

Переведено верно
True translation to the original
Бюро переводов «Адвент Транслэйшн»
Advent Translation Co, Ltd